

կեայն ճառն վասն ական մարմնոյ... (Թղ. 116ա—122բ = տպ. 62—86) :

5. Երանելոյն Սեբերիանոսի խօսք վասն գատկի կաթարոսացն եւ վասն խորհրդոց, որ կոչին անարատք: — Երբեմն յորժամ նախամեծարն արարին չնորհքն Աստուծոյ... (Թղ. 122բ—124բ, 145ա—147ա = տպ. 87—105) :

6. Նորին երանելոյն Սեբերիանոսի Եմեսուեպիսկոպոսի ասացեալ ի բանն թէ Դպրութիւնք բացան: — Ոչխարք իմ, ասէ կենարարն... (Թղ. 147ա—151բ = տպ. 106—123) :

7. Նորին սրբոյն Սեբերիանոսի ասացեալ ի նոյն կրօնս: — Զարմացայ ընդ ձեզ, ովք ըրիստոսասէրք... (Թղ. 151բ—156բ, 158ա = տպ. 124—143) :

8. Նորին Սեբերիանոսի ասացեալ ի սուրբ վկայն յԱկակ մարտիրոս. յորում անէ զՅովսէփ օրինակ Քրիստոսի: — Զուարճանան երկինք... (Թղ. 158ա—բ, 83ա—85բ = տպ. 144—156) :

9. Նորին Սեբերիանոսի ասացեալ ի բան աւետարանին որ ասէ, թէ Հայր, եթէ Հնար է անցցէ յինէն բաժակս այս, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու: — Յորժամ մեզ եղբարք վասն ողորմութեան քարոզէին օրէնք... (Թղ. 85բ—92բ = տպ. 157—182) :

10. Նորին սրբոյն Սեբերիանոսի ասացեալ ի հրաւիրեալս ի մկրտութիւն: — Զի իմաստուն էր Սողոմոն... (Թղ. 92բ—93բ, 80ա—բ, 95ա—բ = տպ. 183—196, տ. 25, ցրանն «եւ տանելիքն ստիպեն |||»: Ինկած տպագրին էջ 196, տ. 15 «եւ չիք ոք...» — 197: Վերջին մասին հետ ինկած են նաեւ յիշատակարանը՝ Գրչին եւ Սրբագրչին: Սրբագրչի վարդան Բաղիշեցի կատարած է բազմաթիւ սրբագրութիւններ, հաւանօրէն բազմաթիւ գաղափարօրինակին հետ:

Սեբերիանոսի վերագրուած այս ճառախումբ ճշգիւ տասն է թուով, ունինք նոյնը էջմիածնի Թ. 496, Թղ. 227ա—320բ (1675), 868, 1ա—127 (Ժէ.): 947 (1215), 1341, 224ա—311բ (Ժէ.), Երեւան, Պետ. Թանգ. 600 (1717): Կայ ձեռագիր մ'ալ Վենետիկ, Մխիթ. Մատ. (յամէ 1673), որ հիմ ծառայած է Աւգերեանի հրատարակութեան (Սեբերիանոսի Եմեսուցոյ Գաբաղացոց կաթիկոպոսի ճառք ժէ: Վենետիկ 1830):

Դ. Թղ. 243ա—395բ (նոտրագիր). Առաջին հատոր երրորդ մասին Հաւաքման երա-

նելոյն Թուրայի Աֆիւացոյ: Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի: — Քանզի փրկիչն մեր՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս ըստ վկայելոյ հրեշտակին... Ա.—Ծ. (Թղ. 243ա—244բ «ցանկ յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի»):

Թղ. 247բ, սիւնակ 2—248 սիւնակ ա (կիսով) գատարկ թողուած, կ'երեւայ գաղափար օրինակի մէջ հոս թուղթ ինկած ըլլալուն:

Կաւարտի այսպէս. «Կատարեցաւ զիրք տնօրէնութեանն Քրիստոսի, որ է առաջին հատոր երրորդ մասին երանելոյն Թուրայի Աղուինացոյն, ի փառս մարդացելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Թղ. 395բ² դատարկ թողուած. թերեւ թարգմանչին յիշատակարանը արտագրելու համար, որ զանց առնուած է: Թարգմանուած է 1345ին ի ձեռն Յրա Պետրոսի Արագոնացոյ եւ Յրա Յակոբայ թարգմանի (հմմտ. էջմիածնի Թ. 68, Թղ. 1—276բ, յամէ 1384):

Ե. Թղ. 396ա—467բ (նոտր) Յաղագս Պիտոյից գրոց. Մովսէսի քերթողի արարեալ: — Պէտք են բացայիշատակք համառօտ քաջադիպութեամբ... (վերջ). «ձաղր երաստս յոքնազան հաւուցն եղանիւր»: Ըստ բովանդակութեան նոյն Հ. Յ. Զօհրայեանի հրատարակութեան հետ (Վենետիկ 1796):

Թղ. 469ա մանր յիշատակագրութիւնք. 469բ—470ա, 471բ, 472ա աստղագիտական երկնագրական բոլորակ տախտակներ, թերեւս ուրիշ ձեռագրէ հանուած եւ իրր պահպանակ գործածուած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ: 1. Թղ. 78բ (Վեցօրէից Յառաջարանին վերջաւորութեան): Արդ աղաչեմ զամենեսեան, յիշես՛իք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՎարդան վարդապետն եւ զանարժան Մարտիրոս քահանայն եւ զիժոն զրիչս:

2. Թղ. 96բ (Վեցօրէից կատարածին). Արդ զրեցաւ այս զիրքս ձեռամբ Մարտիրոս քահանայի ի խնդրոյ սրբամիտ եւ հեղահոգի եւ լի աստուածային շնորհիւն Վարդան քաջ բարունապետի, որ ետ զսա զրել յիշատակ իւրն եւ ծնօղացն եւ ամենայն արեան մերձաւորացն: Ի թիւն ՌձԻԷ (1678) մայիսի ամսոյ ԻԵ: Եւ որք ընթեռնուք եւ կամ թէ օրինակէք, ամմեղաղիր լերուք, զի կար մեր այս էր. եւ միով Տէր ողորմիայիւ յիշէք. եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս. ամէն:

3. Թղ. 96բ (նախորդին կից այլ գրով).

Զատացող դրոցս եւ զբազում երկօք յերեք եւ ի Դ. օրինակէ սրբագրօղս եւ զաստութիւն եւ զսխալանս ամենեւին բարձօղ զՎարդան պիտակ վարդապետ Բաղիշեցի, որ եւ յոյժ աշխատեցայ, եւ զնեքսէս սարկաւազն իմ, որ ընթեցաւ զօրինակն, յիշել աղաչեմ զիս եւ զծնօղսն իմ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ՝ զՎարդապետ եւ զԵղիա, եւ զնաշատուր վարդապետ. եւ զաշակերտեալ մանկունան՝ զԱբրահամ վարդապետն եւ զայլսն ի զթութիւնն Քրիստոսի, եւ ի թողութիւն մեղաց. եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ: Գրեցաւ ի Սպահան քաղաք ի Զուղայ:

4. Թղ. 177ա (ի վերջ Մեկնութեան Մարկոսի). Զատացող սորա, այլ եւ յոյժ տաժանամբ սրբագրօղս՝ զՎարդան վարդապետս Բաղիշեցի աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս հանդերձ ծնօղօք մերովք: Թվ. ՌձԻԷին (1678):

5. Թղ. 244բ (ի վերջ ցանկին Հաւաքման Թ. Ակուինացոյ). Յիշեցէք զմեղուցեալ Վարդանս սպասաւոր բանի, զատացող մատենիս, եւ զծնօղսն իմ, զՎարդան եւ զԵղիա եւ զնաշատուր վարդապետն Բաղիշեցի եւ զաշակերտսն իմ զԱբրահամ վարդապետն եւ զտէր Մարգարէ եւ զտէր Գրիգոր կրօնաւորսն, որ աշխատութեամբ բազմաւ սրբագրեցաք զսա. ի թվին ՌձԻԷ (1678) ի Շօշ քաղաք որ է Իսպահան. եւ Աստուած զձեզ յիշէ եւ ողորմի:

6. Թղ. 242ա. Ի թվին Հայոց ՌձԾԳ (1704) ամին, որ էր նահանջ եւ տանուտէրն կարիճ, ի մարտ ամսոյ ԼԱ. օրն, յաւուր ուրբաթու քառասնորդաց պահոց որ լուսանայր ի շաբաթու տօնի սրբոյ Լուսաւորչին, յառաջնում ժամու գիշերոյն, եղև վաղճան երանելի առն Աստուծոյ տեառն Վարդանայ մեծի վարդապետին մերոյ եւ քաջ հոգեւորին Բաղիշեցոյ մեծի փիլիսոփային, աշակերտի մեծ վարժապետին, եւ թաղեցաւ ի տօնի սրբոյն Գրիգորի բազմաշարժար հայրապետի Հայոց մեծաւ փառօք եւ բազմամբօս ժողովրդօք առաջի սրբոյն Յովաննու Մկրտչի սեղանոյն: Եւ սուգ մեծ եթող ազգիս Հայոց եւ աշակերտաց իւրոց: Որք հանդիպէք ամա, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զմեծ վարդապետն մեր եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն:

ՄԱՆՐ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Թղ. 470բ. Գրեցաւ ձեռամբ մահտեսի Կիրակոսին թվին Հայոց ՌՄԼԷ (1788)ին եւն:

2. Թղ. 96բ. Ի Աստուծոյ է զիր ծընդդեմն Առաքելին թողն Մեղեոնին թվի ՌՄԿԻն (1811) պահոցն վարդէվարին:

3. Թղ. 96բ. Ի Աստուծոյ է զիր ծընդդեմն Առաքելին թողն Մանուկին. թվին ՌՄԿԻն (1813): Ծառայ Տեառն տիրացու Մանուկին բան է:

4. Թղ. 145բ. Ի Աստուծոյ ծառայ տիրացու Մանուկին ձեռամբ զբվեցաւ Հայոց թվին ՌՄՁԴին (1835). եւ որ հանդիպէք մէկ Հայր մեղա մի աս(էք) եւն: Նոյն ձեռքէ նաեւ 123բ:

5. Թղ. 470բ. Իշատակ է այս Աբարչութեան Մեկնիչը եւ Մարկոսի Մեկնիչը հանգուցեալ տիրացու Կիրակոսին որդի տիրացու Մանուկին ձեռամբ զբվեցաւ Հայոց թվին ՌՄՁԶին (1837). եւ որ հանդիպի մէք Հայր մեղայ մի ասէ... ամէն: Գրվեցաւ զիրս մարտի ամսու քսանին աւուր Լուսաորչա Կիրակէն. ծառայ Տեառն տիրացու Մանուկ:

6. Թղ. 242բ. Ուրիշ յիշատակագրութիւն մը նոյն տիրացու Մանուկի գրչէն. «Թվին Հայոց ՌՄՁԷին (1838) յունվարի ԺԵին»:

7. Թղ. 2ա. Նոյն Մանուկի գրչէն «Թվին ՌՄՁԹին» (1840):

8. Թղ. 472ա. Թվին ՌՄՂԸին (1849) ես անարժան տիրացու Ովանէս Մշու յերկրէն երկոտասան Առաքելոց վանից, եկայ Պարբերդու երկիր ի գիւղն Մուղուր օլլի. եւ գրեցի զայս զիրս յունվարի ԺԻին. ով որ հանդիպի, կարգայ, ողորմի տայցէ, Աստուած ողորմի իւրեանց. ամէն:

9. Թղ. 242բ. Իշատակ է այս Աբարչութեան Մեկնիչս հանգուցեալ տիրացու Մանուկին որդին Կիրակոսին հանգուցեալ. եւ որ կարգա... եւն: Տէր լուսաւորէ տիրացու Մանուկին որդին Կիրակոսին հոգին. դատաստանը քաղցր անէ. ամէն. զբվեցաւ ձեռամբն տիրացու Նիկողոսին, թվին Հայոց ՌՄՂԸ (1849)ին, փետրվարի Աին:

10. Թղ. 388բ. Ի լուս. Եւ այս տողս զրեցի շնչին անուն Նիկողոսս. որ է սինամուտն հագար երկու հարիւր ութսուներ եւ հինգին. ՌՄՁԳին. եւ այս եղև կրկին թիւ որ էր հաշիւ:

11. Թղ. 469ա. Իշատակ այս արարչութեան Մեկնիչը եւ Մարկոսի Մեկնիչը հան-

գունեցեալ տիրացու Կիրակոսին որդի տիրացու Նիկողոսին որդի տիրացու Տոնապետին ձեռամբն գրվեցաւ Հայոց թվին ՌՅԻԷ (1878) . եւ որ հան(դիպիք) մէկ (կրկնուած) հայր մեղայ մի ասէ . ամէն : Ծառայ Տեառն տիրացու Տոնապետին :

Այլ գրով . Ստեփան Յովհաննէան ,
Ստեփան Արծիւեան :

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՆՄՈՅՅՆԵՐ ՍԵՐԱՍԻՈՅ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԲԱՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՄԱՆ

Հետեւեալ կտորները հաւաքած էի Սեբաստիոյ հայ ժողովրդական բանահիւսութենէն, երբ դեռ ուսանող էի նոյն քաղաքի վարժարանին մէջ : Կը ցաւիմ, որ անկարող եղայ լրակատար հաւաքածոյ մը կազմելու : Իբրեւ յիշատակ Սեբաստիոյ պատմական եւ պատուական Հայութեան կը ներկայացնեմ այս տեղ փնջիկս, գէթ այսքանը կորուստէ փրկելու համար :

1. Հայ մամիկը իւր թոռնիկներուն կը սորվեցնէ աղօթքս .

Մարիամ մար,
Աստուածամար,
Ք՞ո՞ւն ես թէ արթուն .
— Ոչ քուն, ոչ արթուն :
Անմահութեան ջուր կը բխայ,
Սարկաւազաց ձայնը կու գայ :
Ով որ այս ջուրէն խմէ,
Հայրն ու Որդին խոստովանէ
Հուրն ինի չ'էրի,
Ջուրն ինի չի խղի,
Դժոխոցը դռնէն չանցնի :
Ով որ այս աղօթքը լսէ
Աստուած անոր մեղքը չիչէ :

2. Երբ հաւատացեալը օրուան աշխատանքէն յոգնաբեռն ճրագը կը մարէ եւ աչքերը կը գոցէ, քնանալէ յառաջ հետեւեալ մաղթանքը կ'ընէ .

Ահա մտայ հողվարդ,
Հոգիս քեզի ամանաթ,
Սուրբ պահապան հրեշտակ :

Ադն ու խաչը բարձիս վրայ,
Սուրբ Աւետարանը բերնիս վրայ,
Ընտոր մըտայ աւազան,
Անանկ մտնեմ գերեզման :

3. Տան դուռը դոցած ատեն հետեւեալ մաղթանքը կ'ըսեն .

Երեք երեք աւելցին,
Երեք խաչեր կազմեցին .
Աս տունն էրէր անի,
Տաճարն Սողոմոնի :
Հայրն ախլէ, Որդին փակէ,
Քրիստոս Աստուած չար խափնէ :
Դուռն էկողը քար կ'ըլլի,
Էրզիքն էկողը երկաթ կ'ըլլի :

4. Երբ մանուկը խոստով ունենայ, մայրը հետեւեալ մաղթանքը կը կրկնէ .

Քրիստոս մեր տունը հուր է,
Օթեւանը մսուր է,
Մնքարը բարձր է,
Կերթէ տէօշէկ,
Գարէ հացիկ,
Խոս պնակիկ,
Կուճուկ գթալիկ :
Հօրը աղեկութիւնը,
Մօրը գէշութիւնը,
Այլ չի բռնէ
Այս մանկան խոստովը :

5. Եթէ գիշերը քունը չգայ ու չար խորհուրդներ տանջեն մարդը, հետեւեալը պէտք է աղօթել .

Կրակը մարեցաւ,
Չարը խափանեցաւ,
Չար սատանան հալածեցաւ :
Պօղէս Պէօյէս յերթիք ելան,
Հաճի Յակոբ դուռը ելան :
Անդ(ի)էն երեք ձիաւոր եկան .
Երեքն ալ խատապուէր էին :
Կէս գիշերը դուրս ելայ,
Մէկ գօրաւոր սուրբ տեսայ .
Ինտոր տեսայ սարսափեցայ,
Ըսի . Տէր, քու անունդ ի՞նչ է :
— Իմ անունս սուրբ Մարգիս է :
Սուրբ Մարգիս, սուրբ Օհան,
Սուրբ Նշան, էրկէր Օհան,
Երեք մէկ դուռ բաց իջան,
Հաց կերան, գոհացան,
Բաժակ խմեցին ուրախացան :
Յեան առաջքին ժամ կայնեցան,

Քու ժողովուրդ, Տէր, միաբան,
Քեզ օրհնեցին հազար բերան :
Լուս ի լուսին,
Կուս ի կուսին,
Լուսն է վառ,
Վառ առջեւնին,
Աստուծոյ բանն է բերնին,
Աստուծոյ գիրն է ճակատին :
Ելաւ գնաց սուրբ Տաճարին,
Խոնկը գօտին,
Մէմը ձեռքին :

6. Սուրբ Կարապետի գովքը¹ .

Սուրբ Կարապետ խորան խորան,
Մէջն ալ իլլիք Աւետարան .
Եկէք կարգանք մէջմէկ բերան,
Մուրատատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ եմ գնացեր,
Պասկէր օրան եմ քնացեր :
Մուրատոս առեր չեմ իմացեր .
Մուրատատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ կանանչ փառչեր,
Ոտքերուդ կու գան ճահիլ մանչեր .
Մատաղ ըրէք սեւ սեւ դոչեր
Մուրատատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ բերին կայնեցուցին,
Ոսկի շուրջառն ալ հագցուցին .
Քրիստոս Տէրը գերկը մկրտեցին .
Մկրտատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ կանանչ դաշտեր,
Մէջն ալ իլլիք խաչապաշտներ .
Քրիստոս Տէրը մեր հետ հաշտ էր .
Եկէք երթանք սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ բարձր տեղ է,
Բոլոր իլլիք ծառ ու տեղ է
Ամէն պտուղ տէրտի գեղ է
Տէրտի տէրման սուրբ Կարապետ :

7. Որչափ մօտիկ եւ մտերմիկ կը գգայ հաւատացեալը երկնային հակներու հետ, յայտնապէս կ'երեւի հետեւեալ տողերուն մէջ :

Յիսուս Որդին հարիկս,
Աստուածածին մարիկս .
Բարի հրեշտակը աղբարիքս,
Սուրբ կուսանք ջրովտիքս :

¹ Սուրբ Կարապետ Սեբաստիոյ վանքերէն մէկէն էր :

Ահա մտայ գերեզման,
Հոգիս քեզի պահ կու տամ .
Մինչեւ առաւօտեան :

Աստուածամար,
Լուսնակամար :
Հոգիս տամ քեզի համար,
Իս մի տանիք մուրն ու խաւար .
Մէկիկ որդուդ հոգուն համար,
Արքայութեան դուռը ցըցուր .
Դժոխքի դռնէն անցուր,
Իմ չար մեղքը ինծի ճանչցուր,
Բարի միտքդ ինծի գիտցուր :

Եկէք էրթանք Եկեղեցի
Եւ ծունկ չօքինք սուրբ Տաճարի .
Աղաչանք ընենք մեզի համար :
Եռմար եռմար եւ Մարիամ մար,
Ոչ քուն եմ եւ ոչ արթուն եմ :
Երազ տեսայ գարհուրեցայ,
Կը վախեմ որ քեզի բսեմ .
Մի՛ վախեր, Մարիամ մար, մի՛ վախեր :
Մեր Տէրն եկաւ Երթմ քաղաք,
Այս փէշեր փոեցին,
Երեսին փոշին սրբեցին,
Տաք թասը գլուխն անցուցին,
Աղու գեղը բերանն ի վար լիցուցին :
Խաղ ու կոպիտ թուք երեսին :
Մատները դամիչ խաղցուցին :
Մարիամ մար, որդիդ ես թաղեր .
Մի՛սեր մարիկ, մի՛սեր .
— Հացէնիդ գեղէն ըլլայ,
Ձրէնիդ ըմպուն ըլլայ :
Երկինք գիտենք խափանեցաւ,
Երկնից աստղերը թափեցան .
Լոյսն լոյս սուրացաւ,
Լոյս գերեզմանը բացուեցաւ :
Աղամ Եւան ուրախացաւ
Սատանաներն օխտը դաթն անցաւ .
Ով որ յիչէ այս աղօթքը
Աստուած անոր չիչէ մեղքը :

Տէր, ողորմեա, Տէր, քեզ մեղայ .
Վայ ան աւուր որ ես եղայ :
Հէլալ հէրամ չըսի կերայ :
Յերկան ճամբան իմ գնալու,
Փոշոտ ոտովս իմ կոխելու :
Չունիմ պաշար հետ տանելու .
Քրիստոսուս ջուրապ տալու :

Անդէնք մազէ կամուրճ է .
Արդարը թուաւ անցաւ
Մեղաւորը հուրն էրեցաւ :